ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2020 թվականի N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ և 5-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:
3. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրպետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ որոշմամբ հաստատված հավելվածի 18, 19, 21 և 23-րդ կետերով սահմանված գործողությունները տարածվում են 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ		
2.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
3.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ	Ա. ԼԱՋԱՐՅԱՆ		

*Առաջարկությունները և առարկությունները՝*_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ա. Բախշիյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____Ն որոշման

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԾՐԱԳԻՐ) ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է և ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել բնագավառում ծագած մի շարք խնդիրներ:

2. Երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բարձր մակարդակի հասցնելու և մթերքների առատություն ապահովելու գործում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության վարման գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակումը:

3. Քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքի արտադրության ծավալի աճին, ներմուծվող արտադրանքը տեղական արտադրանքով փոխարինելուն, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, որոնք պահանջում են պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում:

2020 թվականին բուսաբուծության զարգացման նպատակով հողօգտագործողներին տրամադրվել է 11 666,2 կիլոգրամ արևածաղկի, 417 611,5 կիլոգրամ կտավատի, 22 638,0 կիլոգրամ սոյայի, 159 487,0 կիլոգրամ հնդկացորենի, 38 853,6 կիլոգրամ եգիպտացորենի, 112 563,0 կիլոգրամ սիսեռի, 188 180,0 կիլոգրամ ոլոռի, 18 900,0 կիլոգրամ ոսպի, 5 000,0 կիլոգրամ լոբու, 36,0 կիլոգրամ սորգոյի, 15 508,0 կիլոգրամ առվույտի և 204 158,0 կիլոգրամ կորնգանի սերմեր: Հանքային պարարտանյութերից տրամադրվել է 516 050,0 կիլոգրամ ֆոսֆորական և 516 050,0 կիլոգրամ կալիումական պարարտանյութեր: Արդյունքում ցանվել է 1 923,8 հեկտար արևածաղիկ, 5 384,9 հեկտար կտավատ, 299,0 հեկտար սոյա, 1 175,3 հեկտար հնդկացորեն, 2 377,3 հեկտար եգիպտացորեն, 701,8 հեկտար սիսեռ, 549,2 հեկտար ոլոռ, 90,0 հեկտար ոսպ, 50,0 հեկտար լոբի, 3,0 հեկտար սորգո, 638,0 հեկտար առվույտ և 930,7 հեկտար կորնգան:

Անհատույց ֆինանսական աջակցություն է տրամադրվել բանջարեղեն և կարտոֆիլ մշակողներին: Աջակցության ծավալը կազմել է բանջարեղենի և կարտոֆիլի համար 97 092 000,0 ՀՀ դրամ գումար՝ 323,64 հեկտարի դիմաց:

Անհատույց ֆինանսական միջոցներ է տրամադրվել նաև ջերմատնային տնտեսությամբ զբաղվող թվով 179 տնտեսվարողների, աջակցության ծավալը կազմել է 16 627 600,0 ՀՀ դրամ գումար ընդհանուր 54 875 քառակուսի մետրի դիմաց:

Ծրագրի իրականացման արդյունքում 2019 թվականի համեմատ 2020 թվականին ավելացել են շուրջ 1.6 անգամ սոյայի, 2.5 անգամ սիսեռի, 4.6 անգամ ոլոռի ցանքատարածքները: Շրջանառության մեջ է դրվել լոբու մշակությունը:

4. Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) բազմամյա տնկարկ՝ այգիները, անկախ նրանց տարիքից, այդ թվում՝ պտղա-հատապտղային տնկարկների բոլոր տեսակները (ծառեր և թփեր).

2) բանջարեղեն (այսուհետ՝ բանջարեղեն)՝ պոմիդոր, պղպեղ, սմբուկ, վարունգ, սոխ, սխտոր, կաղամբ, գազար, բազուկ.

3) դաշտավարություն՝ երկրագործության ճյուղ, որը գլխավորապես զբաղվում է պարենային, ինչպես նաև թելատու և կերային դաշտային բույսերի մշակությամբ.

4) ընդեղեն մշակաբույսեր (այսուհետ՝ ընդեղեն մշակաբույսեր)՝ ոլոռ, սիսեռ, ոսպ, լոբի.

5) կերային խոտաբույսեր (այսուհետ՝ կերային խոտաբույսեր)՝ առվույտ, ռայգրաս, կորնգան.

6) յուղատու մշակաբույսեր (այսուհետ՝ յուղատու մշակաբույսեր)՝ արևածաղիկ, սոյա, կտավատ, հլածուկ.

7) ջերմոցային տնտեսություն՝ բանջարանոցային մշակաբույսերի աճեցման համար նախատեսված ջեռուցվող կամ չջեռուցվող լուսաթափանց ծածկոցով կառույց.

8) ցանքաշրջանառություն՝ նույն հողատարածքում իրար հաջորդող առնվազն չորս տարվա ընթացքում չորս տարբեր տեսակի մշակաբույսերի (ցելի) ցանքաշրջանառություն (ցանքափոխություն):

5. Գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ, և առաջնահերթ խնդիրը դրանց ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացումն ու ինքնաբավության մակարդակի հետագա բարձրացումն է, մասնավորապես, դա վերաբերում է յուղատու և ընդեղեն մշակաբույսերին, բանջարեղենին, հնդկացորենին, եգիպտացորենին, կերային խոտաբույսերին և ծխախոտին: Հանրապետության բնակչությանը սննդամթերքով ապահովվածության, ինչպես նաև սպառողական շուկայի հագեցվածության հարցում հատուկ տեղ է տրվում նաև պտղաբուծությանը:

6. Առաջնահերթ խնդիր է սեփական արտադրության հաշվին տեղական վերամշակող ընկերությունների կողմից մթերվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը, անասնակերով ապահովվածության մակարդակի բարձրացումը, արտահանման համար մատակարարվող թարմ և վերամշակված պտուղների ծավալների ավելացումը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից:

7. Արցախի Հանրապետության կառավարության կողմից հողօգտագործողներին տրամադրվող պետական աջակցության շարունակական ծրագրերը նպաստում են տևականորեն չմշակված վարելահողերի շրջանառության մեջ ներգրավմանը, նոր այգիների հիմնադրմանը, բազմամյա տնկարկների և գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկական միջոցառումների բարելավմանը, ցանքատարածությունների, համախառն բերքի, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և տնտեսական աճի ապահովմանը:

8. Ծրագրով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում բազմամյա տնկարկների, գարնանացան մշակաբույսերի, բանջարաբոստանային կուլտուրաների, ջերմատնային

տնտեսությունների և ծխախոտի մշակման տարածքների ավելացման խթանմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Դաշտավարության մեջ չափազանց կարևոր է ցանքաշրջանառության կիրառումը և ցանքատարածքների կառուցվածքի բարելավումը:

Մեկ տեսակի կուլտուրայի տևական մշակությունը նույն դաշտում իջեցնում է բերքատվության մակարդակը: Դաշտավարության մեջ առանց մշակաբույսերի հաջորդափոխություն սահմանելու, հնարավոր չէ լուծել հողերի բերրիության ապահովման և կայուն բերքի ստացման խնդիրները: Ցանքաշրջանառությունը միայն մշակաբույսերի և ցելերի հաջորդականություն չէ, այլև ագրոտեխնիկական միջոցառումների համալիր, հողի մշակում, պարարտացում, հողատարման կանխարգելում, որոնց նպատակն է գյուղատնտեսական բույսերից կայուն և բարձր բերք ստանալը: Ցանքաշրջանառությունը մշակաբույսերի և ցելերի գիտականորեն հիմնավորված հաջորդափոխությունն է ժամանակի (տարիների) և տարածության (դաշտերի) մեջ, կամ միայն ժամանակի: Ժամանակն այն գործոնն է, երբ ցանքաշրջանառության մեջ ընդգրկված մշակաբույսերը և ցելերը նույն դաշտում հաջորդում են մեկը մյուսին, իսկ տարածությունը՝ երբ յուրաքանչյուր դաշտում եղած մշակաբույսերը կամ ցելերը տվյալ ժամանակաշրջանում զբաղեցնում են որոշակի դաշտեր:

10. Ցանքաշրջանառության մեջ ճիշտ ընտրված մշակաբույսերի մշակությունը բարելավում է հողի ֆիտոսանիտարական վիճակը, պահպանում էռոզիայից, ավելացնում օրգանական նյութերի քանակը և բարելավում ֆիզիկական հատկությունները: Այդ առումով յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի, ծխախոտի, բանջարեղենի և կարտոֆիլի մշակությունը կարևորվում է ցանքաշրջանառության լավագույն բաղադրիչ լինելու, պարենային որոշ մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման, անասնակերերի կայուն բազայի ստեղծման տեսանկյունից, իսկ ոռոգման կաթիլային համակարգերի կիրառումն ապահովում է մշակվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը:

11. Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են՝

1) բարձրացնել պտղաբուծության ճյուղի արդյունավետությունը, ապահովել երկրի բնակչության կարիքները հայրենական արտադրության թարմ և վերամշակված պտուղներով, խթանել արտաքին շուկաներում ինքնաբավության կարիք ունեցող պտուղների (նուռ, խաղող, խնձոր, տանձ, սերկևիլ, զկեռ, կեռաս, բալ, սալոր, հոն, արևելյան խուրմա, ընկույզ, տխիլ, թութ, թուզ, ազնվամորի, մոշ և այլն) արտադրությունը, նվազեցնել ներմուծումը և ավելացնել արտահանման ծավալները.

2) ինտենսիվ պտղաբուծության զարգացման խթանման միջոցով իրականացնել պտղաբուծության աշխարհագրության ընդլայնման քաղաքականություն.

3) ապահովել վերամշակող ձեռնարկությունների համար անհրաժեշտ քանակությամբ հումք, այդ վերամշակող ձեռնարկությունների զարգացմամբ և քանակական աճով ապահովել դրանց կողմից օգտագործվող հումքի պահանջարկի բարձրացումը.

4) յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, կերային խոտաբույսերի բերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, սպառման համար անհրաժեշտ ներկրման քանակի նվազեցումը.

5) ցանքաշրջանառության կիրառմամբ յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, կերային խոտաբույսերի ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացումը.

6) տարեկան մշակվող հողատարածքների ավելացումը, ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին կատարումը, ցանքաշրջանառության ապահովումը, բարձր ծլունակությամբ սերմացուների օգտագործումը, ցանքի նորմաների պահպանումը:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

12. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) տնկիների արժեքի մասնակի փոխհատուցում.

2) յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, սորգոյի սերմերի արժեքի մասնակի սուբսիդավորում.

3) բանջարեղենի, կարտոֆիլի և լոբու մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

4) ջերմատնային տնտեսությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

5) ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում.

6) սև ցելի մշակություն և խնամք կատարած հողօգտագործողներին անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

7) վարձակալության հիմունքներով հողերի համատեղ մշակություն և/կամ անմշակ հողերի մշակություն իրականացրած հողօգտագործողներին անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

8) կարկտապաշտպան ցանցերի տեղադրման դեպքում՝ անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում:

13. Սույն Ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը կտրամադրվի այն անձանց, որոնք չունեն գյուղատնտեսության ոլորտում ծագած հարաբերություններից բխող նախորդ տարիներից կուտակված չմարված պարտավորություններ (հողի հարկ, վարձավճար, մատակարարված ոռոգման ջրի դիմաց պարտք, Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հանդեպ ժամկետանց պարտքեր), որը հավաստվում է համապատասխան փաստաթղթով:

14. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման գործընթացը

15. Տեղական ինքնակառավարման մարմինները (Ստեփանակերտ քաղաքում՝ նախարարությունը), հիմք ընդունելով նախարարության կողմից սահմանված ժամկետները, ընդունում են յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի, բանջարեղենի, ջերմատնային տնտեսությամբ և այգեգործությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողների հայտերը:

Հայտերի հետ միաժամանակ տեղական ինքնակառավարման մարմիններին (Ստեփանակերտ քաղաքում՝ նախարարություն) են ներկայացվում համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանրացնում և շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, վկայականի համարը և դրանց մշակության համար նախատեսված տարածքների մակերեսները՝ կցելով նաև հայտերի, վկայականի կամ համապատասխան տեղեկանքի պատճենները:

Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների վարձակալները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժին:

16. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի (այսուհետ՝ նախարարի) հրամանով սույն Ծրագրի 15-րդ կետում նշված տեղեկությունների ուսումնասիրման, բանջարեղենի և կարտոֆիլի մշակության համար տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման և իրականացված աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով):

17. Արցախի Հանրապետության շրջաններում հիմնադրվող նռան, խաղողի, այլ պտղատու և հատապտղատու այգիների տնկիների արժեքի մասնակի փոխհատուցում

1) Արցախի Հանրապետության շրջաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված հողատարածքում ավանդական և ինտենսիվ մշակության տեխնոլոգիաներով այգի հիմնադրելու դեպքում, հողօգտագործողներին անհատույց տրամադրվում են խաղողի, խնձորենու, տանձենու, սերկևիլենու, զկեռենու, կեռասենու, բալենու, սալորենու, հոնենու, արևելյան խուրմայի, ընկուզենու, թթենու, կիվիի և այլ պտղատեսակների պատվաստված տնկիների, ինչպես նաև տխլենու, նռնենու, թզենու, ազնվամորու և մոշի տնկիների արժեքի մասնակի փոխհատուցում՝ առավելագույնը մեկ տնկիի դիմաց 1000 ՀՀ դրամ, համաձայն N 1 աղյուսակի.

2) տնկիները ձեռք են բերվում հողօգտագործողների կողմից՝ իրենց հայեցողությամբ.

3) Ծրագրից օգտվելու (տնկիների արժեքի մասնակի սուբսիդավորում) պարտադիր պայման է հանդիսանում ծովի մակերևույթից մինչև 500 մետր գոտիներում նվազագույնը 1,0 հեկտար և

առավելագույնը 10 հեկտար, իսկ ծովի մակերևույթից 500 մետր և ավելի բարձր գոտիներում նվազագույնը 0,5 հեկտար (բացառությամբ Արցախի Հանրապետության Շահումյանի և Շուշիի շրջանների՝ նվազագույնը 0.25 հեկտար) և առավելագույնը 10 հեկտար մակերեսով հողատարածքի համար նռան, խաղողի, այլ պտղատու և հատապտղատու այգի հիմնադրելու նպատակով թույլտվության, այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված լինելը՝ (բացառությամբ 500 մետր և ավելի բարձր գոտիներում հիմնադրելու դեպքում), համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկանքը ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

5) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը ընդհանրացնում և 2 փուլով՝ յուրաքանչյուր տարվա մինչև մայիսի 1-ը և դեկտեմբերի 1-ը նախարարություն են ներկայացնում սույն կետի 1-ին ենթակետում ընդգրկված տնտեսվարողների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 2 աղյուսակի.

6) հիմնադրած այգիների տնկիների արժեքի մասնակի փոխհատուցման տրամադրման նպատակով նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

7) հանձնաժողովը Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից նռան, խաղողի և այլ պտղատու այգիներ հիմնադրած հողօգտագործողների մասին տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում դրանց ճշտությունը, ընդհանրացնում և հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած՝ այգի հիմնադրած հողօգտագործողների ցանկը՝ նշելով հողօգտագործողի տվյալները և տրամադրվող ֆինանսական միջոցների չափը, պետական աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով:

8) Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

18. Գարնանացան և աշնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման ծրագիր

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածքում յուղատու և ընդեղեն մշակաբույսեր, հնդկացորեն, եգիպտացորեն և սորգո մշակելու համար հողօգտագործողներին տրամադրվում է անհատույց ֆինանսական աջակցություն՝ 1 հեկտարի համար սահմանված համապատասխան քանակությամբ սերմի արժեքի մասնակի սուբսիդավորմամբ 70 տոկոսի չափով, (բացառությամբ եգիպտացորենի սերմացուի, որի 1 հեկտարի համար սահմանված համապատասխան քանակությամբ սերմի արժեքի մասնակի սուբսիդավորումը կիրականացվի 50 տոկոսի չափով): Տեղեկությունները ներկայացված են N 3 աղյուսակում.

2) բազմամյա կերային խոտաբույսերի մշակության յուրաքանչյուր տարվա նոր ցանքի դեպքում, մեկ հեկտարի դիմաց կտրամադրվի 50 000 ՀՀ դրամի չափով անհատույց ֆինանսական աջակցություն.

3) մշակաբույսերի սերմացուի ձեռքբերումը իրականացվում է հողօգտագործողների կողմից.

4) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը ընդհանրացնում և յուրաքանչյուր տարվա մինչև մայիսի 1-ը նախարարություն են ներկայացնում հողօգտագործողների ցանկը՝ ձեռք բերված սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման համար, կցելով սերմացուի հավաստագրի, ներմուծումը հավաստող փաստաթղթի, որակի փորձաքննության անցկացման արդյունքների մասին համապատասխան փաստաթղթի, հայտատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենները, հողամասի (ցանքատարածություն համարվող) նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների, իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները կամ նոտարական կարգով վավերացված՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությունը՝ հողատարածքում ցանք կատարելու վերաբերյալ:

5) Ծրագրից օգտվելու պարտադիր պայման է համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ եգիպտացորենի և արևածաղկի մշակաբույսերի դեպքում ոռոգման ջրով ապահովված լինելու կամ, ելնելով նշված հողատարածքում արձանագրված օդերևութաբանական ցուցանիշներից, տվյալ մշակաբույսերի մշակության համար պահանջվող կլիմայական գոտուն հողատարածքի համապատասխանության մասին.

6) սույն կետի 5-րդ ենթակետում նշված տեղեկանքը ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

7) ծրագրում ընդգրկված մշակաբույսերի մշակության համար ձեռք բերված սերմերի արժեքի մասնակի սուբսիդավումը կիրականացվի մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը (աշնանացան ոլոռի ցանքսի դեպքում՝ մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը), նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա.

8) պետական աջակցությունը կտրամադրվի այն հողօգտագործողներին, որոնք հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան և ցանքաշրջանառություն կիրառելու անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում կիրառում են ցանքաշրջանառություն.

9) շրջանների վարչակազմերը, մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը (աշնանացան ոլոռի դեպքում՝ մինչև դեկտեմբերի 15), տեղեկություններ են տրամադրում նախարարությանը սերմերի նպատակային օգտագործման և բնակլիմայական պայմաններին համապատասխան մշակության վերաբերյալ.

10) սերմերի նպատակային օգտագործումն ու բնակլիմայական պայմաններին համապատասխան մշակությունը ստուգելու նպատակով նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

11) ագրոտեխնիկական ժամկետներում ձեռք բերված սերմերի ոչ նպատակային օգտագործման, ինչպես նաև բնակլիմայական պայմաններին անհամապատասխան մշակության հետևանքով ցանքսերի ոչ լիարժեքության (չորացում, թերաճում, բարձր տոկոսայնությամբ նոսրություն) դեպքում տրամադրված սերմերի արժեքի մասնակի սուբսիդավորման համար տրամադրված ֆինանսական աջակցությունը՝ հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե.

12) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում մշակած գարնանացան մշակաբույսերից ստացված բերքի հիմնադրամի պահեստներում իրացման (մթերման) 1 կիլոգրամի դիմաց տրամադրվում է լրավճար համաձայն աղյուսակ 3-ի.

13) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում մշակած աշնանացան և գարնանացան հասկավոր հացահատիկային մշակաբույսերից ստացված բերքի հիմնադրամի պահեստներում իրացման (մթերման) դիմաց տրամադրվում է լրավճար՝ 1 կիլոգրամի դիմաց 10 ՀՀ դրամ գումարի չափով.

14) Հիմնադրամը յուրաքանչյուր տարվա բերքի մթերման գործընթացն ավարտելուց հետո տեղեկություններ են ներկայացնում նախարարություն (ոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 30-ը)՝ նշելով բերք հանձնած հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, մթերված բերքի քանակը.

15) նախարարությունը սույն կետի 14-րդ ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հայտ՝ նշելով վճարման ենթակա գումարները.

16) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը վերը նշված հայտը ստանալուց հետո սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցները.

17) Հիմնադրամը համապատասխան ֆինանսական միջոցները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հողօգտագործողներին է վճարում բերքի իրացման (մթերման) դիմաց սահմանված լրավճարները:

19. Բանջարեղենի և (կամ) լոբու և (կամ) կարտոֆիլի մշակությամբ և (կամ) ջերմատնային տնտեսությամբ, զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում՝

«ա» բանջարեղեն և (կամ) լոբի և (կամ) կարտոֆիլ մշակելու համար 1 հեկտարի դիմաց հողօգտագործողներին անհատույց տրամադրվում է պետական աջակցություն՝ 300 000 ՀՀ դրամ միանվագ գումար, մեկ հողակտորի մակերեսը ոչ պակաս, քան 0,5 հեկտար (բացառությամբ ԱՀ Շահումյանի և Շուշիի շրջանների՝ նվազագույնը 0,25 հեկտար).

«բ» ջերմատնային տնտեսությամբ զբաղվող տնտեսվարողներին անհատույց տրամադրվում է պետական աջակցություն՝ ջեռուցվող ջերմատան համար 1 հեկտարի դիմաց 4 000 000 ՀՀ դրամ, չջեռուցվող ջերմատան համար 1 հեկտարի դիմաց 2 000 000 ՀՀ դրամ (մեկ ջերմատան մակերեսը ոչ պակաս, քան 100 քառակուսի մետր).

«գ» ջերմատնային տնտեսությամբ զբաղվող տնտեսվարողներին անհատույց տրամադրվում է պետական աջակցություն՝ ջեռուցվող ջերմատան համար 1 հեկտարի դիմաց 6 000 000 ՀՀ դրամ, չջեռուցվող ջերմատան համար 1 հեկտարի դիմաց 4 000 000 ՀՀ դրամ (մեկ ջերմատան մակերեսը ոչ պակաս, քան 2000 քառակուսի մետր)

«դ» սեփական միջոցների հաշվին՝ նվազագույնը 1.0 հեկտար մակերեսով, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցված ջերմատնային տնտեսության կառուցման դեպքում, համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում, բայց ոչ ավելի քան 200 000 000 ՀՀ դրամ:

2) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը ընդհանրացնում և յուրաքանչյուր տարվա մինչև մայիսի 1-ը և սեպտեմբերի 1-ը երկու փուլով նախարարություն են ներկայացնում սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում ընդգրկված տնտեսվարողների տեղեկությունները՝ համաձայն N 4 աղյուսակի.

3) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը ընդհանրացնում և մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը նախարարություն են ներկայացնում սույն կետի 1-ին ենթակետի «բ» և«գ» պարբերություններում ընդգրկված տնտեսվարողների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 5 աղյուսակի.

4) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը սույն ծրագրի 1-ին կետի «դ» պարբերությամբ նախատեսված աշխատանքների ավարտից հետո, նախարարություն են ներկայացնում տեղեկություններ, համապատասխան ֆինանսական աջակցության գործընթացն կազմակերպելու նպատակով.

5) սույն ծրագրի 1-ին կետով սահմանված անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման նպատակով նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

6) հանձնաժողովը Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում դրանց ճշտությունը, ընդհանրացնում և տասնօրյա ժամկետում հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած՝ բանջարեղեն և (կամ) լոբի և (կամ) կարտոֆիլ մշակելու և (կամ) ջերմատնային տնտեսությամբ զբաղվելու համար դիմած հողօգտագործողների ցանկը՝ նշելով հողօգտագործողի տվյալները և տրամադրվող ֆինանսական միջոցների չափը, պետական աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով.

7) սույն ծրագրի 1-ին կետի «ա», «բ» և «գ» պարբերություններով նախատեսված աջակցություններն անհատույց կտրամադրվի հիմնադրամի միջոցով՝ հանձնաժողովի կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

8) սույն ծրագրի 1-ին կետի «դ» պարբերությամբ նախատեսված աջակցությունն անհատույց կտրամադրվի հիմնադրամի միջոցով՝ հանձնաժողովի կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

9) Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

20. Ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում.

1) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում մշակած ծխախոտից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց տրամադրվում է լրավճար՝ 1 կիլոգրամի դիմաց 20 ՀՀ դրամ գումարի չափով.

2) լրավճարը տրամադրվում է Արցախի Հանրապետության տարածքում գործող ընկերություններին մթերված բերքի դիմաց.

3) մթերող ընկերությունները յուրաքանչյուր տարվա ծխախոտի բերքի (հումքի) մթերման գործընթացն ավարտելուց հետո տեղեկություններ են ներկայացնում նախարարություն (ոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 30)՝ նշելով բերք հանձնած հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, մթերված բերքի քանակը.

4) նախարարությունը սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հայտ՝ նշելով մթերող ընկերությունների անվանումները և վճարման ենթակա գումարները.

5) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը վերը նշված հայտը ստանալուց հետո սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցները.

6) մթերող ընկերությունները համապատասխան ֆինանսական միջոցները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հողօգտագործողներին են վճարում ծխախոտի բերքի իրացման (մթերման) դիմաց սահմանված լրավճարը:

21. Սև ցելի մշակություն և խնամք կատարած հողօգտագործողներին անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

1) համայնքի վարչական սահմաններում սեփականության և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում սև ցելի մշակություն և խնամք կատարած հողօգտագործողներին տրամադրվում է անհատույց ֆինանսական աջակցություն՝ մեկ հեկտարի հաշվով 30 000 ՀՀ դրամ.

2) պարտադիր պայման է հանդիսանում ծովի մակերևույթից մինչև 900 մետր բարձրության վրա ընդգրկված տարածքները.

3) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ 2 փուլով, յուրաքանչյուր տարվա մինչև ապրիլի 15-ը և հուլիսի 1-ը նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով համայնքը, հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները և սև ցելի տակ մշակված տարածքների մակերեսները.

4) սույն ծրագրի 1-ին կետով սահմանված անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման նպատակով նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

5) հանձնաժողովը Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում դրանց ճշտությունը, ընդհանրացնում և ստուգումներ իրականացնելու 2-րդ փուլի ավարտից հետո տասնօրյա ժամկետում հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած՝ սև ցել մշակած հողօգտագործողների ցանկը, համաձայն N 6 աղյուսակի՝ պետական աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով.

6) Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է հիմնադրամի միջոցով:

22. Վարձակալության հիմունքներով հողերի համատեղ մշակության և/կամ անմշակ հողերի մշակություն իրականացրած հողօգտագործողներին անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

1) Պետական աջակցությունը տրամադրվում է համայնքի վարչական սահմաններում սեփականության և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերի միավորման միջոցով համատեղ մշակություն իրականացրած հողօգտագործողներին.

2) Պետական աջակցությունը տրամադրվում է համայնքի վարչական սահմաններում սեփականության և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացված նախկինում անմշակ (առնվազն երեք տարի խամ ու խոպան) և թփուտներով պատված գյուղատնտեսական նշանակության տարածքները (վարելահողեր) կուլտուրականացնելու, դրանք շրջանառության մեջ դնելու նպատակով մշակություն իրականացրած հողօգտագործողներին.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պարտադիր պայման է հանդիսանում հողի վարձակալության պայմանագիրը և համատեղ մշակվող հողատարածքի նվազագույն՝ 10 հեկտարի չափը.

4) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված աջակցությունը կտրամադրվի երեք տարվա ցանքաշրջանառություն իրականացրած (համապատասխան սխեմայով) վարձակալներին՝ վերջին երրորդ տարում 1 հեկտարի հաշվով 150 000 ՀՀ դրամ.

5) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը նախարարություն են ներկայացնում տեղեկություններ, համաձայն սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի.

6) Հանձնաժողովը Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ընդհանրացնում և ստուգում դրանց ճշտությունը.

7) Նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարի ուսումնասիրվում և ստուգումներ են իրականացվում, սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման նպատակով:

23. Կարկտապաշտպան ցանցերի տեղադրման (անձնական միջոցներով) դեպքում անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում հիմնադրված այգիներում ռիսկերի մեղմման գործընթացում ռազմավարական մեծ նշանակություն

ունեցող, կարկտահարության դեմ պայքարում, կարկտապաշտպան ցանցաշերտերի տեղակայման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում (հուսալի միջոց է հատկապես խաղողի և պտղատու այգիներում).

2) պարտադիր պայման է հանդիսանում այգու հողատարածքի նվազագույն 0.5 և առավելագույնը 10.0 հեկտարի չափը.

3) կարկտապաշտպան ցանցերի ներդրման համակարգի արժեքի 50 տոկոսը կտրամադրվի անհատույց, բայց ոչ ավելի քան 4 000 000 ՀՀ դրամ մեկ հեկտարի հաշվարկով:

4) Նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարի ուսումնասիրվում և ստուգումներ են իրականացվում, սույն կետի 3-րդ ենթակետերով սահմանված անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման նպատակով:

4.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

24. Սույն Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և ստացվող բերքի որակի բարձրացում.

2) մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազեցում:

25. Ծրագրի իրականացումից յուրաքանչյուր տարի նախատեսվում է՝

1) ցանել ավելի քան 5300 հեկտար յուղատու և ավելի քան 1600 հեկտար ընդեղեն մշակաբույսեր.

2) վերամշակող ընկերություններում հողօգտագործողներից մթերել ստացված ծխախոտի ամբողջ հումքը.

3) ֆինանսական միջոցները տրամադրել շուրջ 650 հեկտար բանջարեղենի մշակության համար:

4) ֆինանսական միջոցները տրամադրել շուրջ 8.0 հեկտար ջերմատնային պայմաններում մշակության համար:

26. Յուղատու և ընդեղեն մշակաբույսերը, հնդկացորենը և բանջարեղենը հումք են հանդիսանում վերամշակող ընկերությունների համար: Յուղատու մշակաբույսերի վերամշակումից ստացված ձեթը, ընդեղեն մշակաբույսերից՝ հատիկը, հնդկացորենից՝ հնդկաձավարը և բանջարեղենից՝ պահածոները հանդիսանում են առաջին անհրաժեշտության պարենամթերք և ունեն մեծ դեր ու նշանակություն մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար: Կերային մշակաբույսերից ստացվում է անասնակեր, որը կնպաստի անասնաբուծության զարգացմանը:

Աղյուսակ N 1

Արցախի Հանրապետության շրջաններում 1 հեկտար նռան, խաղողի, այլ պտղատու և հատապտղատու այգիների հիմնադրման համար անհրաժեշտ տնկիների քանակը և արժեքի մասնակի փոխհատուցման գումարը ըստ մշակության տեխնոլոգիայի

Հ/հ	***Պտղատեսակը***	***Տնկման սխեման (միջշարային և միջբնային)***	***Մեկ հեկտարի հաշվով տնկիների քանակը ըստ մշակության տեխնոլոգիայի (հատ)***		**Փոխհատուցման ենթակա գումարը (ՀՀ դրամ)**	
		ավանդական	***ավանդական***	***ինտենսիվ***	***ավանդական***	***ինտենսիվ***
1	նռնենի	4x4	625	1000	100000	150000
2	խաղող	3x2	1667	3334	1000000	2000000
3	խնձորենի	5x4	500	1000	300000	600000
4	տանձենի	5x5	400	833	320000	800000
5	սերկևիլենի	5x4	500	833	400000	650000
6	զկռենի	5x4	500	570	500000	570000
7	կեռասենի	6x6	278	833	208500	800000
8	բալենի	6x6	278	833	208500	800000
9	սալորենի	5x5	400	667	300000	500000
10	նշենի	5x5	400	833	260000	800000
11	հոնենի	5x4	500	667	500000	650000
12	արևելյան խուրմա	5x5	400		320000	
13	ընկուզենի	10x10	100	208	100000	200000
14	տխլենի	5x4	500	800	175000	280000
15	թթենի	10x10	100		100000	
16	թզենի	6x6	278	500	139000	500000
17	կիվի			1667		1000000
18	ձիթենի	6x6	278	625	278000	625000
19	ազնվամորի			10000		1500000
20	մոշենի			5000		1500000
21	այլ պտղատու				200000	

Աղյուսակ N 2

Արցախի Հանրապետության շրջաններում նոր հիմնադրված նռան, խաղողի, պտղատու և հատապտղատու այգիների մասին

Հ/Հ	Համայնք	Ա.Ա.Հ	անձնագրային տվյալները	պտղատեսակը	տարածքը (հա)	մշակության տեխնոլոգիան
1						
2						
3						
...						
Ընդամենը՝ շրջանում						

Աղյուսակ N 3

Գարնանցան և աշնանացան հասկավոր հացահատիկային մշակաբույսերի և գարնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման, աջակցության չափի և տրամադրվող լրավճարի մասին

Հ/Հ	Մշակաբույսը	Ցանքի նորման (կգ/հա)	Սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորում (%)	Սերմացուի մեկ կիլոգրամի դիմաց տրամադրվող աջակցության չափը ոչ ավելի քան (ՀՀ դրամ)	Մթերված արտադրանքի մեկ կիլոգրամի դիմաց տրամադրվող լրավճար (ՀՀ դրամ)
2021 թվական					
1	Եգիպտացորեն (հատիկ)	20	50	1500	10
2	Հնդկացորեն	100	70	350	15
3	Արևաձաղիկ	4		2500	40
4	Կտավատ	60		450	15
5	Սոյա	60		400	50
6	Հլածուկ	6		600	50
7	Սիսեռ	100		700	30
8	Ոսպ	150		500	30
9	Ոլոռ	200		250	30
10	Սորգո	12		1000	10
11	Ցորեն				10
12	Գարի				10
13	Հաճար				10
14	Տրիտիկալե				10

Աղյուսակ N 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետությունում բանջարեղենի և կարտոֆիլի մշակությամբ զբաղվող հողօգտագործողների վերաբերյալ

Հ/հ	***Համայնք***	***Ազգանուն, անուն, հայրանուն***	***Անձնագրային տվյալները***	***Ընդհանուր մակերեսը (քառ.մետր)***	***Հեռախոսահամարը***
1					
2					
3					
...					
Ընդամենը՝ շրջանում					

Աղյուսակ N 5.

Արցախի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությամբ զբաղվող հողօգտագործողների վերաբերյալ

Հ/հ	***Համայնք***	***Ա.Ա.Հ.***	***Անձնագրային տվյալները***	***Ընդհանուր մակերեսը քառ.մետր***	***որից***		***Հեռախոսահամարը***
					ջեռ.	***չջեռ***	
1							
2							
3							
...							
Ընդամենը՝ շրջանում							

Աղյուսակ N 6

Արցախի Հանրապետությունում սև ցելի մշակությամբ զբաղվող հողօգտագործողների վերաբերյալ

Հ/հ	Համայնք	Ազգանուն, անուն, հայրանուն	Անձնագրային տվյալները	Ընդհանուր մակերեսը (հեկտար)	Աջակցության գումարը (ՀՀ դրամ)	Հեռախոսահամարը
1						
2						
3						
...						
Ընդամենը՝ ԱՀ-ում						

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում պետական աջակցության նոր միջոցառումներ սահմանելու անհրաժեշտությամբ՝ առանձնացնելով բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամակակակից տեխնոլոգիայի տեղադրման համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության տրամադրման կարգը՝ ներկայացնելով առանձին «Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը հաստատելու մասին» ծրագիրը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշմամբ հաստատվել էր բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը, որը նախատեսված է մի քանի տարիների համար: Օբյեկտիվ պահանջ է առաջացել պետական աջակցությամբ իրականացվող միջոցառումները համապատասխանեցնել 2021 թվականին գյուղատնտեսության ոլորտում Արցախի Հանրապետության կառավարության կողմից տարվող քաղաքականությանը:

Նպատակը և բնույթը

Սույն որոշման նախագծի հիմնական նպատակն է Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրից առանձնացնել բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամակակակից տեխնոլոգիայի տեղադրման՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության տրամադրման կարգը՝ սահմանելով առանձին ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր, շտկել բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության միջոցառումները՝ սահմանելով պետական աջակցության նոր միջոցառումներ՝ նպատակ ունենալով զարգացնել պտղաբուծությունը և պտուղների ներմուծումը փոխարինել տեղական արտադրանքով:

Ակնկալվող արդյունքը

«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կամրագրվեն բուսաբուծության

ոլորտում գործող և 2021 թվականին իրականացվելիք նոր միջոցառումները, պետական աջակցության ձևերը և չափերը, կգործի Արցախի Հանրապետությունում ոռոգման համակարգերի համալիր զարգացման նոր ծրագիրը, պտղաբուծության զարգացման արդյունքում պտուղների ներմուծումը կփոխարինվի տեղական արտադրանքով՝ ինչը պարենային անվտանգության ապահովման և արտահանման հնարավորություն կստեղծի:

<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ա. ԲԱԽՇԻՅԱՆ***

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա. ԲԱԽՇԻՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն

_____

(ստորագրությունը)

Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2020 թվականի համար

Հ/հ	Մշակաբույսի կամ միջոցառման անվանումը	Նախատես-վում է մշակել (հա)	Համախառն բերք (տ)	Անհատույց դրամական միջոցների տրամադրում (ՀՀ դրամ)	Լրավճար մթերված բերքի դիմաց (ՀՀ դրամ)	Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)
1	Ծխախոտ		2500		50000000	50000000
2	Բանջարեղեն և(կամ) լոբի և(կամ) կարտոֆիլ	176.36		52908000		52908000
3	Այգեգործություն	268.28		58276100		58276100

Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2021 թվականի համար

Հ/հ	Մշակաբույսի կամ միջոցառման անվանումը	Նախատեսվում է մշակել (հա)	Ցանքսի կամ տնկման նորմա (կգ, հատ/հա)	Համախառն բերք (տ)	Ապրանքանյութի պահանջը (կգ, հատ)	Անհատույց դրամական միջոցների տրամադրում (ՀՀ դրամ)	Լրավճար մթերված բերքի դիմաց (ՀՀ դրամ)	Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)	որից	
									ԱՀ պետական բյուջե	ԱՀ ԳԳԱՀ միջոցներով
1	Եգիպտացորեն (Պիոներ)	2000.0	20	8000	40000	60000000	80000000	140000000	140000000	
2	Հնդկացորեն	1000.0	100	1400	100000	35000000	21000000	56000000	56000000	
3	Արևածաղիկ	1500.0	4	2250	6000	15000000	90000000	105000000	105000000	
4	Կտավատ	3500.0	60	4550	210000	94500000	68250000	162750000	162750000	
5	Սոյա	250.0	60	250	15000	6000000	12500000	18500000	18500000	
6	Հլածուկ	100.0	6	100	600	360000	5000000	5360000	5360000	
7	Սիսեռ	700.0	100	840	70000	49000000	25200000	74200000	74200000	
8	Ոսպ	100.0	150	100	15000	7500000	3000000	10500000	10500000	
9	Ոլոռ	800.0	200	960	160000	40000000	28800000	68800000	68800000	
10	Սորգո	50.0	12	50	600	600000	500000	1100000	1100000	
11	Կորնգան	1350.00	120			67500000		67500000	67500000	
12	Առվույտ	650	20			32500000		32500000	32500000	
13	Հացահատիկային մշակաբույսեր	12500		25000			250000000	250000000	250000000	
14	Ծխախոտ	150		3000.0			60000000	60000000	60000000	
15	Բանջարեղեն	650				195000000		195000000	195000000	
16	Ջերմատնային տնտեսություն	8				25000000		25000000	25000000	
17	Ջերմատնային տնտեսություն՝ նորանոր տեխնոլոգիաներով	1				200000000		200000000		200000000
18	Այգեգործություն	1000				383500000		383500000	383500000	
19	Սև ցել	3000				90000000		90000000		90000000
20	Հողերի համատեղ մշակում	5000								
21	Կարկտապաշտպան ցանց	25				100000000		100000000	100000000	
ԸՆԴԱՄԵՆԸ		***34334.0***		***46500.0***		***1401460000.0***	***644250000.0***	***2045710000.0***	***1755710000.0***	***290000000.0***